

539



ԳԻՏԱԿԱՆ-ՍՕՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ
«ԳՐՈՒԷՏԱՐԱԿԱՆ ՄԻՏՔ».

Գրուէտարներ բոլոր երկրներէ—միացէ՛ք!

Ա. ԼՈՒՆԱՉԱՐՍԿԻ

Երեսուցամբ ու այց
ՅԵՂԱՓՈՒՍՈՒԹԻՒՆ

Գր. 05 7 12476

ԵՒ

Դ Ա Տ Ա Ր Ա Ն



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան ՄԱՏԻՆԵԱՆԻ, Վօրօնցօվի կամուրջ
1919 թ.

1153
15320

А. ЛУНАЧАРСКИЙ—РЕВОЛЮЦИЯ И СУД.

ՅԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԱՏԱՐԱՆ

Հասարակութիւնը միատարր չէ: Նրա ծոցում մարտնչում են իրար դէմ հակադիր շահերով, ուստի և տարբեր հոգեկան կազմով ու տարբեր իրաւագիտակցութեամբ դասակարգեր:

Տիրապետող դասակարգերը ոչ միայն պետութեան ամբողջ ուժով փաստօրէն ամրացնում են իրենց դասակարգային արտօնութիւնները, ոչ միայն իրենց իսկ ստեղծած օրէնքներով դատում են այդ արտօնութիւններին ամբողջապէս կամ մասնաւորապէս ձեռնամուխ լինելը ցանկացողներին, այլև աշխատում են ժողովրդի գիտակցութեան մէջ ամրացնել այն միտքը՝ իբրև իրենց դատական հիմնարկութիւնները ամբողջ հասարակական կեանքի հիմքն են կազմում, որի խախտմամբ կուտուրայի ամբողջ շէնքին փուլ գալու վտանգ է սպառնում:

Սակայն նոր դասակարգը, պրօլետարական դասակարգը, կապիտալիստական հասարակակարգում իր հետ աւելի բարձր տնտեսական կարգ բերելով, հանդիսանում է նաև իբրև մարտնչող անհամեմատ աւելի բարձր իրաւունքի համար, քան կողոպտիչների ու շահագործողների պահապան շուն հանդիսացող և հին, պառաւած հասարակակարգի խարխլած, ոսկրացած իրաւունքը:

Բայց այդ նոր դասակարգը մինչ այն ժամանակ, քանի դեռ կեղեքւած վիճակում է գտնուում, քանի նա հանդիսանում է տէրերի իր նկատմամբ գործադրւող իրաւունքի զօնը, բնականօրէն զրկւած է իր իրաւագիտակցութիւնը ձեւակերպելու հնարաւորութիւնից, նա չի կարող ստեղծել օրում իր դատարանի իրէպլը կամ տենչած օրէնքների ժողովածուն (կօդէքսը): Եթէ մի մասնագէտ-իրաւագէտ որոճար, մտածէր էլ նոյնիսկ նախօրօք ուրուագծելու ապագայ հասարակակարգի օրէնքների ժողովածուի նախագիծը, Ուէլսի, Բէլլամիի բօմանների նման, նրանից ոչինչ չէր ստացի, բացի հետաքրքրական գիտական ֆանտաստիկայից: այդպիսի փորձեր արւում էին: Կիսարժեքական, կիսասօցիալիստ մի տաղանդաւոր գրող,—Անտօն Մէնդէլը— զրանով նոյն իսկ մեծ փառք ձեռք բերաւ:

Բայց այդ ընդորը լուկ տեսական, թէօրէտիքական խաղ է միայն: Բւրաքանչիւր մի դասակարգ իրաւունքն ստեղծում է գործնականում, երբ նա գործադրում է իր իշխանութիւնը, երբ նա կառուցում է հասարակական աշխարհը իր աշխարհի ձևով և նման, այսինքն՝ մի կողմից համաձայն իր դասակարգային շահերի, միւս կողմից՝ աւելի կօնկրէտ պայմաններին:

Նոյնիսկ կտրուկ յեղաշրջման միջոցով քաղաքական իշխանութեան հասնող և ոչ մի դասակարգի միանգամից նոր աշխարհ ստեղծելու ընդունակութիւն չի աւած: Ինչպէս Մարքսն է ասում, այդ աշխարհը ծնւում է հին հասարակական հիւսւածքների ցանցով փաթաթուած:

Բայց դրանից չի հետևում, որ յեղափոխական դասակարգը պիտի յապաղէ կամ քնքաքար վարէ (գնաղ անէ»), հին կարգի հետ. նրա գործն է խորտակել և ստեղծել: Հնի գիմադրութիւնը ինքնին է ստեղծւում և հանդիսանում է ոչ թէ պլիւս, այլ մինուս:

Եւ այսպէս յեղափոխական դասակարգն իր հետ բերում է նոր իրաւագիտակցութիւն, նրա յեղափոխութեամբ ստեղծւած նոր կեանքի անտեսական նոր պայմանների հետ համաձայնութեան մէջ գտնուող ձևերի և իրաւայարարութիւնների նախազգացում, նա իր հետ բերում է նոր դատական խիղճ, չարի և բարու մասին նոր ըմբռնումներ, պատկերացումներ: Ինքը յեղափոխութիւնը հին և նոր իրաւունքի մեծ հակադրման փաստն է, արտօնեալներին առելի իրաւակարգի վրայ կատարւած ժողովրդական մասսայական դատաստանի ակտը: Նոր քաղաքացիական և քրէական իրաւունքի ստեղծումը, ինչպէս և պետական նոր կենցաղավարութեան ձևի, իշխանութեան նոր մարմինների,—որոնց թւում և դատական մարմին—ստեղծումը՝ յեղափոխութեան ամբողջական է, նրա մէջ թաղնւած և նոր դասակարգային շահով ու հետևապէս նոր անտեսական ծրագրով ստեղծւած նոր իրաւագիտակցութեան ձևակերպումը և իրագործումը:

Հոկտեմբերի 25-ին կատարւեց ամենամեծ յեղափոխութիւնը, ինչպիսին տեսել էր երկիրը: Աշխատաւորները սկզբում միանգամից հեշտութեամբ չյաղթեցին—նման բան պատահում էր և առաջ,—բայց իրենց յաղթանակի պատուը պահեցին սեփական ձեռքերում, չշտապեցին ստրկական ինքնանւաստացմամբ զիջելու այն նրա հերթական թեկնածուներին, ինչպէս, օրինակ, այդ արեւց 1917 թ. մարտին:

Կարելի է սպասել, որ այդ յեղաշրջումը կատարելուց յետոյ իրենց երկրի քաղաքական ռազմական տէրը դառնալով, պրօլետարիատն ու գիւղացիութիւնը, կէրէնսկիների երէկւայ կեղծ-յեղափոխական իշխանութեան նման, կարող լինեն համբերել

հին դատարանների, հին օրէնքների լի ուժով, աղատ գործողութեանը:

Կարելի է, արդեօք, սպասել, որ աշխատաւոր ժողովուրդը—դրութեան նոր տէրը, ամեն ինչ կարող է կարգ ու կանոնի մէջ համարել, երբ զուտ բուրժուական դատավճիռները, անյողողոգ, աննկուէ կապիտալիզմի ոգով, որի դէմ նա իր հզօր հարւածներն էր ուղղում, արաստանում են յանուն այն կառավարութեան, որին նա տապալել ու ընկճել է, և երբ Մէնշևին էլ,—կարծէք թէ ոչինչ պատահած չլինէր,—շարունակում է հրատարակել տապալւած իշխանութեան վերջին օրէնսդրութիւնները:

Յեղափոխութիւնը հէնց դրա համար էլ կատարում է, որպէսզի նոր իրաւունք ստեղծւի, որպէսզի մասունների իրաւագիտակցութիւնը իրականութիւն դառնալու համար հնարաւորութիւն ձևը բերել կարողանայ: Ահա ինչու յաղթական ժողովուրդը անյապաղ ձեռք պիտի մեկնէ նոր դատարանների և նոր օրէնսդրութեան ստեղծելուն, գործնական կեանքում նրանց իրագործելուն, սկզբում բնական ըմբռմամբ—ղեկավարելով իր յեղափոխական խիղճով, և աստիճանաբար միայն ձևակերպելով նոր իրաւունքը ու բիւրեղացնելով իսկական ժողովրդական դատարանի ամուր և զեղեցիկ ձևերը:

Հիմնայապառ, ջարդ ու փշուր տնել հին դատարանը—մեր շղթաներն ու մեր թշնամու գործիքը—դա յեղափոխականների առաջին պարտքն է, դա թելադրում է նրանց բնական ռազմական ընազը:

Յետոյ, նրանց պարտքն է թէկուզ ընդհանուր գծերով նշանակել, պարզել նոր դատարանի հիմքերը—և մնացածը թողնել յեղափոխական ժողովրդի ստեղծագործութեանը:

Բուրժուազիան ստիճանաբար բուն դնելով ֆէօդալական հասարակութեան ծոցում, կարող էր հին կարգի իրաւունքը փոխարինել հոսմէական պատրաստի իրաւունքով, միայն նոր պայմանների համաձայն թեթև փոփոխութիւններ մացնելով, որովհետեւ նա, ինչպէս և հին հոսմէական աշխարհը, կանգնած էր մասնաւոր սեփականութեան բացարձակ ճանաչման հողի վրայ: Պրօլետարիատը նման ճանապարհով դնալ չի կարող. նրա առաջխաղացութիւնը ոչ մի կերպ վերադարձ հնին չի ներկայացնում իրենից. նրա իրաւունքի համար պատմութեան մէջ նախընթաց օրինակներ չկան: Եւ որովհետեւ կապիտալիստական իրաւակարգում նա ոչ մի հնարաւորութիւն չի ունեցել իրաւական ստեղծագործութեամբ զրազելու—նրան ոչինչ չի մնում անելու: Բայց կի՞նք սովորի գործնականում զատելը, սովորոյթի իրաւունք (обычное право) ստեղծելը, բազելով այդ միևնոյն հոգևոր շարժման այն աղբիւրից, որը նրան բերու գէպի յաղթական յեղափոխութիւնը, և որը իր մէջ

արտացոլում է նրա դասակարգային բնաւորութիւնն ու նրա նշանակութեան հզօր աճումը հասարակական կեանքում:

Հոկտեմբերեան յեղափոխութիւնը վերացնելով ցարական և բուրժուական դատարանը, հրաւիրում, կոչ է անում ուս աշխատաւոր ժողովրդին դէպի նման ստեղծագործութիւն:

Եւ թող շատն բուրժուական իրաւաբանները, որ այն՝ ինչի մասին մենք խօսում ենք այստեղ, այն՝ ինչ որ վաղը պիտի անէ ժողովուրդը, չլուսած ու հրէշաւոր է իրաւաբանական տեսակէտից: Անթոյլատրելի է այդ միայն այն նեխած ու լճացած կեղծ-գիտութեան տեսակէտից, որը ներկայացնում է իրենից տէրերի իրօք վայրագ ու ամարդի իրաւունքը—յատկապէս իր վրայ կրելու համար նշանակած իրաւունքի արհեստականօրէն յօրինւած հիմքը: Ետնիսկ բուրժուական ուսումնականները, համեմատաբար աւելի աղնիւններն ու տաղանդաւորները, որոնք աշխատում էին իրենց իրաւաբանական ուսմունքը իսկական գիտութիւններէ—բիօլոգիայի, հոգեբանութեան և հասարակագիտութեան—վրայ հիմնել, ստիպւած էին մեր յեղափոխութիւնից ոչ շատ վաղ, կարծէք թէ նախատեսելով այն, խօսել մեր լեզուով:

Մենք հրաւիրում ենք մեր թշնամիներին, նախ քան նրանք ընթացք կըտան իրենց պօլէմիկական գրիչներին, կարգալ այն մի քանի ցիտաաները իրենց կողմից իսկ ճանաչող, ընդունող հեղինակութիւններից, որոնք գրւած են կարծէք թէ երէկ, կարծէք թէ յատկապէս ի պաշտպանութիւն դատարանների վերանորոգման այն ձևի, որին հարկադրում են մեզ գիմել մեր վերապրող մեծ, նշանաւոր ժամանակի հանդամանքներն ու պայմանները: Մենք հրաւիրում ենք մեր բարեկամներին լսել,—ինչ են ասում բոլորովին ոչ «բօլշեիկներ», իսկական գիտնականները յեղափոխութեան իրաւաստեցձագործման մասին:

Բոլորովին նոր իրաւունքի մասին, որը, առ այժմ նոր արդարութեան պահանջների անորոշ ձևով միայն, բերում է իր հետ չորրորդ դասակարգը և առաջիկայ անցողական շրջանի մասին, որի մէջ աղաղակող հակասութեամբ իրար կը հանդիպեն հին, անյայտացող իրաւակարգի վերջին մնացորդներն ու նորի առաջին սկզբնաւորութիւնները,—խօսում է Բէրօլցհայմէրը*), իսկ Մէնզլերը աշխատում էր նոյն իսկ ձևակերպել նոր բարձրացող դասակարգի գիտակցութեան մէջ արժատացած և աշխատաւորական ժողովրդական պետութեան մէջ իրադրուելիք այդ իրաւունքը **):

*) Berolzheimer, System der Rechts und Wirtschaftsphilosophie. համ. II, էջ 483.
**) Anton Menger Neue Staatslehre.

Այն, ինչ որ ստեղծագործում է բուրժուական պետութեան ծոցում, ամենակտրուկ կերպով, թէպէտ, ձիշտ է, ոչ իրաւաբանական ճանապարհներով, խնստովանում է և պ. պ. պրօֆէսորների այնպիսի մի ուսուցիչ, ինչպիսին Ելլինէկն է, երբ նա խօսում է, օրինակ, այն նորմաների մասին, որոնք ոչ իրաւաբանական, բայց սօցիալական տեսակէտից գործում են ինչպէս օրէնքներ, թէպէտ չեն մշակուում ձևական օրէնսդրական կարգով *):

Նշանաւոր Ֆէյերբախի աշակերտ Կնապպը, պարզորոշ բնութենում էր այն տարբերութիւնը, որ գոյութիւն ունի գրւած տիրող իրաւունքի և գեղեսուհու, բէալիկացիայի չենթարկւած իրաւունքի միջև, որի դրօշակի տակ նոր դասակարգը հենց այդ իրաւունքն իրական դարձնելու համար իր յեղափոխութիւնն է կատարում. և ահա ինչ է գրում այդ համեմատաբար աւելի յեղափոխական դարեշրջանի իրաւաբանը. «Իրաւունքի խնդիրն ընթանում է յաճախ յեղափոխական փողոցային կռիւների մէջ, կամ համաշխարհային լատերագմի ծայրալիքներում—և միշտ նա (իրաւունքը), իր էութեան հետ միասին, իր մէջ օրէիկտիվ ու թի կոչ է պարունակում, որը պիտի ապահովէ իրաւունքի կրողին արտաքին իրաւունքը»:

Ահա հենց իշխանութեան գլուխն անցնելու շնորհիւ նոր դասակարգերի ներքին իրաւագիտակցութեան արտաքին հզօր իրաւունքը փոխադրելու մէջ է կայանում գործը:

Իրական, պողիտիվ իրաւունքի, այսինքն կայուն իշխանութեան գրւած իրաւունքի, և նոր հասարակական ուժերի արդարութեան իզէալ «բնատուրիտիվ» իրաւունքի փոխ-յարաբերութիւնները աւելի որոշ և վառ կերպով բնութագրել է Պետրաժիցկին, նա, որով ուս պաշտօնական գիտութիւնը հակւած է պարծենալու, ինչպէս Աւրօպայում շուսատու աստղ ճանաչւած մի անձնաւորութեամբ: Նա ասում է.

«Պօզիտիվ (գրւած) և ինտուիտիվ (նոր դասակարգերի իզէալը) իրաւունքի միաժամանակ գոյութիւնը հնարաւոր է միայն ընդհանուր գծերով նրանց մէջ համաձայնութիւն լինելու դէպքում. տարաձայնութեան յայտնի սահմաններից անցնելու ժամանակ անխուսափելի է պօզիտիվ իրաւունքի խորտակումը դիմագրութեան դէպքում—սօցիալական յեղափոխութեան ձևով»:

Այդ բանը հէնց առաջ եկաւ հոկտեմբերի 25-ին և անհասկանալի կլինէր, եթէ յեղափոխութիւնից յետոյ, ինչ որ մի հրաշքով բուրժուական «պօզիտիվ իրաւունքը» ողջ մնար, այն

*) Jellinek. Verfassungsänderung und Verfassungswandlung. էջ 3.

ժամանակ, երբ ինքը յեղափոխութիւնը կանչած էր հէնց նրան սպանելու տենչով:

Պէտրաժիցկին մանրամասն նկարագրում է, ինչպէս փոփոխուող հանգամանքների ազդեցութեան տակ, ցածր խաւերի մէջ աճում է ոչ պարզ, սակայն այրող, վառ կերպով զգացուող իրաւական նոր իշխալը. ինչպէս աւելի նեղիչ է դառնում արդարութեան զգացումը՝ որքան աւելի մեծ դիմադրութեան է հանդիպում. ինչպէս նա զդէպի գոյութիւն ունեցող կարգն ու նրա օրէնքները մօլեռանդ ատկութեան է հասնում և վերջ ի վերջոյ պայթիւն — յեղափոխութիւն է առաջ բերում» *):

Պէտրաժիցկուն չեն վախեցնում նոյնիսկ նոր ժողովրդական և յեղափոխական իրաւագիտակցութեան այնպիսի արտայայտութիւններ, ինչպիսի ձև իհարկէ պրօլետարիատի յեղափոխութիւնն ընդունել չէ կարող. «Յեղափոխութեան գիյօտիները որքան էլ զլւելի թւային, — ասում է նա, — և կուլտուրական կենտրոնների ու որբանների քարուքանդ անելը, — այդ բոլորը ժողովրդական վերաւորած զգացմունքի և ոտնատակ տւած իրաւունքի համար մղող տարրերային վրէժի անխուսափելի հետևանքն են, այսինքն՝ նրա ժողովրդական ներքին իրաւագիտակցութիւնը»:

Եզրակացութիւնը պարզ է. ժողովուրդը կրում է իր վրայ նոր ինտուիտիվ իրաւունքը, որ նրանից ամենից առաջ պահանջում է օրգանների սնչացումը հին իրաւունքի՝ որպիսին նրան ամենամեծ և կատարեալ անարդարութիւն է թւում:

Նրա ինտուիտիվ իրաւունքը, որ արտացոլում է իր մէջ մասսաների դասակարգային շահերը և համապատասխանում է ստեղծուող նոր տնտեսական կենցաղավարութեան ձևին, կարող է պարզօրէն ձևակերպւել միայն յեղափոխական իրաւական ստեղծագործութեան պրօցեսսում: Այդպէս է յեղափոխութիւնների օրէնքը և ամենից առաջ այն յեղաշրջումների, որոնք նախընթաց օրինակներ, պրէցէդէնտներ չունեն:

Կորչին մուսիա-դատարանները, մեռած իրաւունքի բազինները. կորչին բանկիր-դատարանները, որոնք պատրաստ են կապիտալի անբաժան տիրապետութեան թարմ գերեզմանի վրայ կենդանի մնացածների արիւնը խմել: Կեցցէ ժողովուրդը, որ նոր դիտու նման եռացող, եփ եկող իր դատարաններում ստեղծում է նոր իրաւունքը՝ — արդարութիւն բոլորի համար, աշխատաւորների մեծ եզրայրութեան և հաւասարութեան իրաւունքը:

*) Петражицкий, Теория права.

